«Գանձապետական համակարգի մասին» ՀՀ օրենք

Հոդված 9. ԳԼԽԱՎՈՐ ՖԻՆԱՆՍԻՍՏԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Գլխավոր ֆինանսիստն ապահովում է պետական մարմնի կողմից՝

ա) ֆինանսական կառավարման համակարգերի առկայությունը.

բ) գնումների մասին օրենսդրությանը համապատասխան՝ գնումների համակարգի առկայությունը:

2. Գլխավոր ֆինանսիստը պատասխանատու է պետական մարմնի տրամադրության տակ գտնվող ֆինանսական միջոցների արդյունավետ և հրապարակային օգտագործման համար և ձեռնարկում է օրենսդրությամբ սահմանված միջոցներ՝

ա) պետական մարմնի կողմից օրենսդրությամբ նախատեսված դեպքերում և կարգով ֆինանսական միջոցների հավաքումն ապահովելու համար.

բ) միջոցների վատնումը, չնախատեսված ծախսերի կատարումը կանխելու համար.

գ) պետական մարմնի ֆինանսական պարտավորությունների և հիմնական միջոցների կառավարման համար, ներառյալ՝ հիմնական միջոցների հաշվառումը, պահպանությունը և շահագործումը.

դ) համակարգի պետական հիմնարկներին՝ բյուջետային դասակարգմանը համապատասխան, բյուջեով նախատեսված միջոցների բաշխումն ապահովելու համար:

3. Գլխավոր ֆինանսիստը պարտավոր է՝

ա) պետական մարմնի և/կամ համակարգի որևէ պետական հիմնարկի միջոցներ հատկացնելուց առաջ համոզվել, որ վերջինս շարունակում է ապահովել ֆինանսական միջոցների կառավարման համակարգը.

բ) ապահովել պետական մարմնի կողմից սույն օրենքի և այլ ակտերի դրույթների պահպանումը.

գ) ապահովել ծախսերի գերակատարումը կամ պետական մարմնի կողմից հավաքվող եկամուտների թերակատարումը բացառելու անհնարինության դեպքում՝ պետական մարմնի անունից լիազոր մարմին այդ մասին հաշվետվությունների ներկայացումը.

դ) ապահովել պետական մարմնի կողմից իրականացվող ֆինանսական գործառնությունների վերաբերյալ սահմանված կարգով հաշվապահական գրանցումները.

ե) ապահովել ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը և լիազոր մարմնի կողմից սահմանված կարգով պետական մարմնի անունից ներկայացումը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով, Հայաստանի Հանրապետության Նախագահին, Հայաստանի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ~~Ազգային ժողովի վերահսկիչ պալատ~~հաշվեքննիչ պալատ և լիազոր մարմին.

զ) լիազոր մարմնի կողմից սահմանված կարգով ներկայացնել ֆինանսական հաշվետվություններ, այդ թվում՝ նաև տեղեկատվություն՝ հաշվետու ժամանակահատվածի փաստացի եկամուտների, ծախսերի և կանխատեսումների մասին: